# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

## ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի Մարզի
Գյումրի Համայնքի Ղեկավար
Պարոն Վարդգես Սամսոնյանին
Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահի
Տնօրենի Ժ /Պ՝ Կարեն Բարսեղյանից

Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահը 2018 թ-ից սկսել է համագործակցել ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Իմ Հայաստան» ծրագրի հետ, որի արդյունքում պատկերասրահը ստացել է բավականին մեծ նյութատեխնիկական աջակցություն: Ծրագրի շրջանակներում ստեղծվեց և բացվեց Հայաստանում նորարարական թանգարանային խանութի առաջին մոդելը: Ինչպես նշել էինք 24.09.2020թ N51 գրությունում, համագործակցությունը շարունակվել է և պատկերասրահին տրամադրվել է ևս մեկ խոշոր դրամաշնորհ, որի շնորհիվ պատկերասրահը ամբողջությամբ կկահավորվի, կունենա նոր լեդ լուսավորություն և լրացուցիչ ժամանակավոր պատեր՝ ցուցադրությունը ընդլայնելու համար, տպագրական նյութեր, Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահի պատկերագիրք և այս ամենի շնորհիվ կդառնա միջազգային թանգարանային նորմերին համապատասխան Հայաստանում առաջատար և նախադեպը չունեցող պատկերասրահ:

Պատկերասրահի նոր ցուցադրության վրա աշխատել են թանգարանային ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Այս ծրագրի իրագործման շնորհիվ Գյումրու «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» ՀՈԱԿ-ը մրցելի է դառնում նույնիսկ եվրոպական լավագույն թանգարանների հետ: Նվիրատվության ամբողջ փաթեթը կազմում է 7 000 000 դրամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՍՏԱՑՎԱԾ 14 01 22
ԳՐԱՆՑՎԱԾ N 673

Աշխատանքները կատարելու ընթացքում երկրորդ հարկի հատակի գորգի (ковралин) փոփոխման կարիք առաջացավ՝ 200 քառակուսի մետր, որը պատկերասրահի բացումից հետո չի փոխվել, չափազանց հնացած է և այս պահին չի համապատասխանում պատկերասրահի նոր ժամանակակից դիզայներական լուծումներին, նախնական հաշվարկներով 1 քառակուսի մետր հատակի գորգի (ковралин) արժեքը 3000 դրամ է, ընդհանուր գումարը կազմում է 600000 դրամ:

Պարո՛ն Սամսոնյան, Խնդրում ենք Ձեզ աջակցել այս կարևոր նախաձեռնությանը և ներառել այս հարցը առաջիկա ավագանու նիստին, որպեսզի պատկերասրահը կարողանա ներկայանալի դառնալ հանրությանը նոր կոնտեքստով:

Կանխավ հայտնում ենք շնորհակալություն:

Կից ներկայացնում ենք նոր ցուցադրության նախագիծը և արված աշխատանքները:

Տնօրենի ժ/պ Կարեն Բարսեղյան

